

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ ԱՐՏԱՇԵՍԻ

ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ԿԱՄ ՆՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ՎԵՐՁՆԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԲ.00.04 - Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական
դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա,
դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական
գործունեության տեսություն) մասնագիտությամբ
իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2014

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ОГАНЕСЯН АРМЕН АРТАШЕСОВИЧ

ПРОБЛЕМЫ ПЕРЕСМОТРА ОКОНЧАТЕЛЬНЫХ ПРОЦЕССУАЛЬНЫХ
РЕШЕНИИ ПО ВНОВЬ ОТКРЫВШИМСЯ ИЛИ НОВЫМ ОБСТОЯТЕЛЬСТВАМ
В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ РА

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по
специальности 12.00.04 - Судебное право (судоустройство, гражданский процесс,
уголовный процесс, криминалистика, судебная экспертиза, адвокатура, теория
оперативно-розыскной деятельности)

ЕРЕВАН-2014

**Ատենախոսության թեման հաստատվել է Եվրոպական կրթական
տարածաշրջանային ակադեմիայում**

Գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, իրավաբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ
վաստակավոր իրավաբան **Գ.Ս. Ղազինյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Ս.Ա. Դիլբանդյան**
իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ, ՀՀ վաստակավոր
իրավաբան **Դ.Զ. Ավետիսյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ Ոստիկանության կրթահամալիր**
Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014 թվականի հունիսի
12-ին՝ ժամը 12⁰⁰-ին, Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՂ-ի
իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք
Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի
գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2014 թվականի հունիսի 12-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
իրավ. գիտությունների թեկնածու, դոցենտ՝

Վ.Դ. Ավետիսյան

**Тема диссертации утверждена в Европейской региональной
образовательной академии**

Научный руководитель: член-корреспондент НАН РА, доктор
юридических наук, профессор,
заслуженный юрист РА **Г.С. Казинян**

Официальные оппоненты: доктор юридических наук,
профессор **С.А. Дилбандян**
кандидат юридических наук, доцент,
заслуженный юрист РА **Д.З. Аветисян**

Ведущая организация: **Образовательный комплекс Полиции РА**

Защита состоится 12-го июля 2014г. в 12⁰⁰ часов на заседании Специального совета
ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025,
г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников
библиотеки ЕГУ.

Автореферат разослан 12-го июня 2014 года.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук, доцент

В.Д. Аветисян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Մարդու իրավունքների պաշտպանությունն այն հիմնարար սկզբունքներից է, որոնց շնորհիվ ձևավորվում է պատշաճ վերաբերմունք ոչ միայն պետության, օրենքի, հասարակական կարգի, այլև քաղաքացիական հասարակության նկատմամբ: Մարդու իրավունքների երաշխավորումը, ապահովումը և պաշտպանությունը ժողովրդավարական, իրավական պետության, քաղաքացիական հասարակության իրավաքաղաքական ու բարոյական առաջնահերթություններից է՝ սահմանադրական զարգացումների և պետական ու հանրային ինստիտուտների գործունեության առանցքը¹:

Մարդու իրավունքների պաշտպանության ապահովման ոլորտում առանձնակի կարևոր նշանակություն ունի նրա խախտված կամ վիճարկվող իրավունքների, ազատությունների, օրինական շահերի պաշտպանությունը, ինչի ապահովման և երաշխավորման արդյունավետ միջոցների շարքում իր ուրույն տեղն է զբաղեցնում նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերջնական դատավարական որոշումների վերանայման ինստիտուտը: Այս ինստիտուտի առանձնահատկությունը դրսևորվում է նրանում, որ այն հնարավորություն է տալիս որպես կանոն օբյեկտիվ պատճառներով նախկինում թույլ տրված սխալների վերացման արդյունքում ապահովելու քրեական գործերի լուծման օրինականությունը և հիմնավորվածությունը, վերականգնելու անձի խախտված իրավունքները և արժանապատվությունը:

Ռուսական կայսրության՝ 1864 թվականի քրեական դատավարության կանոնադրության, Հայաստանի ՄԽՀ 1923, 1934, ՀՍՍՀ 1961 թվականների քրեական դատավարության օրենսգրքերի համապատասխան հիմքերի հիման վրա մշակված բացառիկ վերանայման սույն ինստիտուտը նույնիսկ վերջին տարիներին ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում կատարված էական փոփոխություններից հետո գերծ չի մնացել թերություններից, ինչի վառ վկայությունն են թե՛ իրավակիրառ պրակտիկայում առկա հիմնախնդիրները, թե՛ այդ մասին ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած մի շարք դիրքորոշումները, թե՛ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում այս ինստիտուտի առանձին տարրերի նորովի կարգավորումը:

Այս հանգամանքները, ինչպես նաև հայրենական դատավարական իրավունքում թեմայի՝ խորությամբ ուսումնասիրված չլինելը, դատավարական գրականության մեջ դրա բազմաթիվ հարցերի շուրջ առկա ոչ միատեսակ ըմբռնումներն օբյեկտիվորեն վկայում են թեմայի արդիականության մասին:

¹ Տե՛ս ՀՀ Նախագահի՝ 2012 թվականի հոկտեմբերի 29-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը հաստատելու մասին» ՆԿ-159-Ն կարգադրությունը:

Ատենախոսության թեմայի մշակվածության աստիճանը: Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերջնական դատավարական որոշումների վերանայման քրեադատավարական հարաբերությունները հայրենական դատավարական իրավունքում մենագրության կամ ատենախոսության տեսքով չեն ուսումնասիրվել, իսկ խորհրդային դատավարական գրականությունում առաջին մենագիր, դոկտորական և թեկնածուական աշխատանքները գրվել են միայն 1959 թվականից հետո:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ ինչպես հայրենական, այնպես էլ խորհրդային ու արտասահմանյան գրականության մեջ գիտական այլ աշխատանքների տեսքով հետազոտվել են ատենախոսության թեմային նվիրված առանձին հարցեր:

Հետազոտության օբյեկտը: Որպես հետազոտության օբյեկտ՝ հանդես են գալիս նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերջնական դատավարական որոշումների վերանայման քրեադատավարական հարաբերությունները:

Հետազոտության առարկան: Հետազոտության առարկան նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերջնական դատավարական որոշումների վերանայման ինստիտուտի տեսական վերլուծության, իրավակարգավորման և գործնական կիրառման հարցերն են:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերջնական դատավարական որոշումների վերանայման ինստիտուտի տեսական, իրավական ու գործնական հիմնահարցերի հնարավորինս համապարփակ ուսումնասիրությունը, վերլուծությունը, ինչպես նաև կատարված հետազոտությունների արդյունքների հիման վրա ինստիտուտի կատարելագործմանն ուղղված առաջարկությունների ներկայացումն է:

Այս նպատակին հասնելու համար հեղինակի կողմից առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերջնական դատավարական որոշումների վերանայման էությունը,

- բացահայտել հետազոտվող ինստիտուտի ծագման և զարգացման պատմությունը,

- վերլուծել նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով բացառիկ վերանայման կառուցակարգի հարաբերակցությունը դատական վերանայման մյուս եղանակների հետ և ընդգծել դրանց նմանություններն ու տարբերությունները,

- հետազոտել նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքերով մինչդատական վարույթում կայացված վերջնական որոշումների վերանայման

հիմնահարցերը,

- ուսումնասիրել բացառիկ վերանայման հիմքերին և ժամկետներին, սուբյեկտներին ներկայացվող պահանջները,

- գնահատել նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով բացառիկ վերանայման դատավարական կարգի արդյունավետությունը,

- վերլուծել ձևավորված իրավակիրառ պրակտիկան,

- իրականացնել ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի և նոր օրենսգրքի նախագծի համեմատադրական վերլուծություն,

- համակարգել հետազոտության արդյունքները և ներկայացնել հիմնախնդիրների լուծմանն ուղղված առաջարկներ:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության ընթացքում կիրառվել են գիտության մեթոդոլոգիայի համընդհանուր՝ դիալեկտիկայի և պատմական, համատեսական՝ անալիզի և սինթեզի, մասնագիտական՝ համակարգակառուցվածքային, համեմատական ու գործառնական մեթոդները:

Հետազոտության տեսական հիմքը: Հետազոտության տեսական հիմքում ընկած են նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերջնական դատավարական որոշումների վերանայման ինստիտուտին նվիրված մենագրություններ, ուսումնական դասագրքեր, դոկտորական և թեկնածուական ատենախոսություններ, գիտական հոդվածներ, ատենախոսությունների սեղմագրեր և գիտական այլ աշխատություններ: Դրանցից կարելի է հատկապես առանձնացնել Գ.Գ. Հարությունյանի, Գ.Ս. Ղազինյանի, Ա.Գ. Վաղարշյանի, Ս.Ա. Դիլբանդյանի, Դ.Զ. Ավետիսյանի, Ռ.Ն. Մելիքյանի, Ա.Ս. Ղամբարյանի, Հ.Հ. Ղուկասյանի, Ս.Ռ. Մարաբյանի, Մ.Ա. Ծատուրյանի, Վ.Ս. Թադևոսյանի, Լ.Վ. Գոլովկոյի, Ֆ. Լիչի, Ս. Թրեշելի, Վ.Ա. Դավիդովի, Վ.Յա. Չիսոյակովայի, Մ.Ս. Ստրոգովիչի, Բ.Ս. Տետերինի, Վ.Ս. Բլինովի, Վ.Ս. Բոգրովի, Ն.Վ. Բատուևի, Վ.Ի. Բասկովի, Գ.Զ. Անաշկինի և Ի.Դ. Պերլովի, Ա.Ս. Կոբլիկովի, Մ.Լ. Բելոբաբչենկոյի, Լ.Շ. Բերսուգուրովայի, Ն.Ա. Գրոմովի, Վ.Ա. Բանինի, Ն.Պ. Վեդիշևի, Վ.Պ. Բոժնի, Ա.Դ. Զումակուլովի, Տ.Լ. Օկսյուկի, Ա.Ա. Սոբենինի, Յա.Ե. Ֆիլևի, Վ.Ե. Բասկակովայի, Վ.Ի. Ռադչենկոյի և այլոց աշխատությունները:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքը: Հետազոտության իրավական և փորձառական հիմքն են կազմել Ռուսական կայսրությունում, այդ թվում՝ նրա կազմի մեջ մտնող Արևելյան Հայաստանում 1864 թվականին ընդունված քրեական դատավարության կանոնադրությունը, ՀՍԽՀ 1923, 1934, ՀՍՍՀ 1961 թվականների քրեական դատավարության օրենսգրքերը, ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգիրքը, նոր օրենսգրքի հայեցակարգը և նախագիծը, Ռուսաստանի Դաշնության, Լատվիայի, Էստոնիայի, Վրաստանի և օտարերկրյա այլ պետությունների քրեադատավարական օրենսդրությունները,

ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ վճռաբեկ, վերաքննիչ և ընդհանուր իրավասության դատարանների դատական ակտերը, ինչպես նաև հետազոտությանն առնչվող ներպետական և արտասահմանյան մի շարք այլ իրավական ակտեր:

Հետազոտության գիտական նորույթը: Հետազոտության գիտական նորույթն այն է, որ հայրենական դատավարական իրավունքում առաջին անգամ փորձ է արվել համալիր հետազոտության ենթարկելու նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերջնական դատավարական որոշումների վերանայման քրեադատավարական հարաբերությունները՝ հիմնվելով ինչպես ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի և նոր օրենսգրքի նախագծի, այնպես էլ առանձին օտարերկրյա պետությունների քրեադատավարական օրենսդրությունների համեմատաիրավական վերլուծության, տեսական կարծիքների, ՀՀ սահմանադրական և Մարդու իրավունքների եվրոպական դատարանների իրավական դիրքորոշումների, ՀՀ վճռաբեկ և մյուս աստիճանների դատարանների դատական ակտերի ուսումնասիրության և պարզաբանման վրա:

Հետազոտվել են դատավարական գրականության մեջ ոչ ամբողջովին ուսումնասիրված կամ գրեթե չուսումնասիրված այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքերով մինչդատական վարույթում կայացված վերջնական որոշումների վերանայումը, ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված օրենքի դրույթի հիման վրա կայացված վերջնական ակտերի վերանայումը՝ որպես պետության պոզիտիվ պարտականություն դիտարկելու նպատակահարմարությունը, նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով բացառիկ վերանայման դատավարական կարգի արդյունավետությունը և այլն: Այս և այլ հետազոտությունների արդյունքների հիման վրա կատարվել են տեսական եզրահանգումներ և ներկայացվել օրենսդրական առաջարկներ:

Ատենախոսության գիտական նորույթը արտացոլված է նաև օրենսդրական փոփոխությունների առաջարկություններում և պաշտպանության ներկայացվող դրույթներում:

Պաշտպանության ներկայացվող դրույթները:

1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման կամ որ նույնն է՝ վարույթի նորոգման կամ վարույթի վերաբացման ինստիտուտը, հանդես գալով որպես օրինական ուժի մեջ մտած վերջնական ակտերի վերանայման բացառիկ եղանակ և փուլ, հնարավորություն է ընձեռում անօրինական կամ անհիմն ակտերի վերացման միջոցով ուղղելու գործում թույլ տրված սխալները և վերականգնելու մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (*restitutio in integrum*):

2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերջնական դատավարական որոշումների վերանայման ինստիտուտի ծագման և պատմական զարգացման ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս իմաստավորելու վերջինիս էությունն ու նշանակությունը, ճիշտ ընկալելու և որոշելու նրա տեղն ու դերը քրեական դատավարության համակարգում: Ուստի այդ տեսանկյունից Ռուսական կայսրության՝ 1864 թվականի քրեական դատավարության կանոնադրությունը, Հայաստանի ՄԽՀ 1923, 1934 և ՀՍՍՀ 1961 թվականների քրեական դատավարության օրենսգրքերը հանդիսանում են այն հիմնական իրավական աղբյուրները, որոնց հիման վրա էլ բացառիկ վերանայման սույն ինստիտուտը կառուցվեց ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում:

3. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով բացառիկ վերանայման մեխանիզմը, չնայած դատական վերանայման մյուս կառուցակարգերի հետ որոշ ընդհանուր գծեր ունենալուն, այնուամենայնիվ էականորեն տարբերվում է դրանցից և հանդիսանում է վերանայման ինքնուրույն և անկախ վարույթ, ուստի քրեադատավարական տարբեր բովանդակություն և նշանակություն ունեցող վարույթների՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով բացառիկ վերանայման ու վերաքննության (վճռաբեկության)՝ օրենսդրի կողմից ձևական փոխկապակցումը խնդրահարույց է:

4. Մինչդատական վարույթում կայացված վերջնական որոշումների՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքերով վերանայման հնարավորությունը օրենսդրորեն համակարգային իրավակարգավորման ենթարկելու մասին սահմանադրական պահանջը կատարելու համար ոչ միայն վերացման են ենթակա այդ հնարավորությունն արգելող օրենսդրական դրույթները, այլև հստակ կարգավորման կարիք ունի դրա իրականացման դատավարական կարգը: Իսկ ոչ թե դատարանին, այլ ՀՀ գլխավոր դատախազին վերանայման այս իրավունքը վերապահելը պայմանավորված է ՀՀ Սահմանադրությամբ դատախազությանը վերապահված լիազորություններով, ինչպես նաև մինչդատական վարույթում դատական վերահսկողության և դատախազական հսկողության հարաբերակցության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներով:

5. Նոր երևան եկած հանգամանքների՝ ձևական ապացուցման հիմքերով վերջնական դատավարական որոշումները կարող են վերանայվել, եթե այդ հիմքերը հաստատվել են բացառապես օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռով, քանի որ միայն այդ ժամանակ է հնարավոր ապացուցված համարել անձի մեղավորությունը:

6. Այն դեպքերում, երբ ՀՀ սահմանադրական դատարանը Սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչում քրեական պատասխանատվություն

նախատեսող օրենքի դրույթը, վերջնական ակտերի վերանայումը ոչ թե պետք է կախված լինի գործի ելքով շահագրգռված անձանց կողմից բողոքի պարտադիր ներկայացումից, այլ այդ ակտերի վերանայման նպատակով միջոցների ձեռնարկումը պետք է լինի առաջին հերթին պետության պոզիտիվ պարտականությունը: Իսկ այն պարագայում, երբ պետությունն ինչ-ինչ պատճառներով քայլեր չի ձեռնարկում համապատասխան անձանց խախտված իրավունքները վերականգնելու համար, ապա նրանք կարող են բողոք ներկայացնել, սակայն դրա համար չպետք է լինի ժամկետային սահմանափակում:

7. Քանի որ նոր երևան եկած հանգամանքներով դատական վերանայման նախնական վարույթի նպատակը նոր երևան եկած հանգամանքի առկայությունը պարզելն է, ուստի արդարացված չէ այս վարույթի հարուցումն այն դեպքերում, երբ նոր երևան եկած հանգամանքը հաստատված է օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Ասվածը ենթադրում է, որ նախնական վարույթ պետք է հարուցել նոր երևան եկած հանգամանքների՝ միայն գնահատողական հիմքով՝ միաժամանակ բացառելով այդ հիմքով անմիջականորեն դատարան բողոք ներկայացնելու հնարավորությունը: Իսկ նշված հիմքի առկայությունը պարզելու համար նախնական վարույթ հարուցելու դատավարական կարգը այնքանով, որքանով չի ապահովում անձի հիմնարար իրավունքների և օրինական շահերի երաշխավորված պաշտպանություն, չի կարելի ընդունելի համարել:

8. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական վերանայման բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացված մի շարք պահանջների խախտման համար իրավական հետևանքներ չամրագրելը, իսկ բողոքում առկա առանձին ձևական սխալները, թերությունները վերացնելուց հետո անձին կրկին բողոք ներկայացնելու հնարավորություն չընձեռելը վկայում է նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով բացառիկ վերանայման դատական վարույթի արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտության մասին, ինչը հնարավոր է ապահովել բողոքը վերադարձնելու մասին որոշում կայացնելու, ինչպես նաև բողոքը վերադարձնելու և վարույթի հարուցումը մերժելու հիմքերի հստակ տարանջատման և կանոնակարգման արդյունքում:

9. Եթե նոր հանգամանքներով դատական վերանայման վարույթը հարուցվում է դատարանի կիրառած օրենքի դրույթը ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված լինելու հիմքով, ապա բողոքարկվող դատական ակտը չի կարող մնալ ուժի մեջ: Իսկ այն դեպքերում, երբ այդ դատական ակտը բեկանվում և փոխանցվում է ստորադաս դատարան, ապա միայն բացառիկ դեպքերում է հնարավոր, որ գործի նոր քննության արդյունքում կայացվող նոր դատական ակտի եզրափակիչ մասը չտարբերվի բեկանված դատական ակտի եզրափակիչ մասից:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության տեսական նշանակությունն այն է, որ հայրենական դատավարական իրավունքում առաջին անգամ մշակվել է նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերջնական ակտերի վերանայման ինստիտուտի համակողմանի հետազոտությանը նվիրված աշխատություն, որում տեղ գտած տեսական եզրահանգումները կարող են դառնալ գիտական կառուցողական բանավեճերի առարկա ու հանդիսանալ տեսական աղբյուր հետագա նմանատիպ աշխատանքների մշակման համար:

Ատենախոսության գործնական նշանակությունն արտահայտվում է նրանում, որ հետազոտության արդյունքների հիման վրա ներկայացված օրենսդրական առաջարկությունները կարող են կիրառվել ՀՀ քրեական դատավարության օրենսդրության մշակման ժամանակ, ինչպես նաև կարող են նպաստել իրավակիրառ պրակտիկայում առկա հիմնախնդիրների լուծմանը:

Հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել նաև թեմային նվիրված ուսումնական դասընթացների կամ քրեական գործերով վարույթն իրականացնող մարմինների գործունեության ընթացքում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է ԵՏԱ իրավագիտության ամբիոնում: Հետազոտության արդյունքների մի մասը տեղ է գտել հեղինակի գիտական հոդվածներում: Ատենախոսության մի շարք դրույթներ հեղինակի կողմից ներկայացվել են նաև դասընթացների և առանձին քննարկումների շրջանակներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք միասին ներառում են տասը պարագրաֆներ, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված գրականության և իրավական աղբյուրների ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը 194 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվում են թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակն ու խնդիրները, մեթոդաբանական, տեսական, իրավական ու փորձառական հիմքերը, ինչպես նաև գիտական նորույթը, ձևակերպվում են պաշտպանության ներկայացվող դրույթները, ցույց են տրվում ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերջնական դատավարական որոշումների վերանայումը՝

որպես բացառիկ վերանայման եղանակ» վերնագրի ներքո, կազմված է չորս պարագրաֆներից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ «Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերջնական դատավարական որոշումների վերանայման եռությունը» վերտառությամբ, ուսումնասիրվում և վերլուծվում են հետազոտվող ինստիտուտի անհրաժեշտությունը պայմանավորող սահմանադրական, ինչպես նաև կոնվենցիոնալ հիմնադրույթները: Հիմնավորվում է այն, որ սույն ինստիտուտն ունի բացառիկ բնույթ: Մասնավորապես, հեղինակը կարծում է՝ միայն այն հանգամանքը, որ խնդրո առարկա ինստիտուտը հնարավորություն է ընձեռում վերանայելու հետագա բողոքարկման ու վերանայման հնարավորությունները սպառած օրինական ուժի հատկանիշներ ունեցող վերջնական ակտերը, արդեն իսկ վկայում է վերջինիս բացառիկ բնույթի մասին:

Հեղինակը համամիտ չէ այն կարծիքներին, որ հետազոտվող ինստիտուտը չի կարող բնութագրվել քրեական դատավարության փուլի շրջանակներում, և դա բացատրում է նրանով, որ վերջինս համապատասխանում է փուլին ներկայացվող չափանիշներին: Իսկ այն հանգամանքը, որ այս փուլը մի դեպքում հաջորդում է առաջին աստանի, մեկ այլ դեպքում՝ վերաքննիչ և վճռաբեկ վարույթների փուլերին, կարող է հաջորդել նաև քրեական գործի հարուցման կամ նախնական քննության փուլերին, այսինքն՝ դրա առկայության դեպքում խստորեն չի պահպանվում փուլային հաջորդականությունը, ըստ հեղինակի՝ վկայում է այս ինստիտուտի բացառիկության և սովորական փուլերից որոշակիորեն տարբերվելու, բայց ոչ փուլ չլինելու մասին:

Անդրադառնալով այն հարցին, թե որ եզրույթն է առավել ճիշտ բնորոշում քննության առարկա ինստիտուտը՝ «վերանայում», «գործի նորոգում», թե «գործի վերաբացում»՝ հեղինակը գալիս է այն եզրահանգման, որ այս եզրույթների հիմքում ընկած է նույն գաղափարը, և բովանդակային, ինչպես նաև իրավաբանական առումով դրանց միջև առկա չէ որևէ տարբերություն, ուստի դրանք չեն կարող ընկալվել տարբեր իմաստներով և լրիվ համարժեք են իրար:

Ուսումնասիրելով իրավաբանական գրականության մեջ բազմաթիվ քննարկումների ու բանավեճերի առարկա դարձած այն խնդիրը, թե նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայումը ենթադրում է արդյոք սխալի առկայություն՝ հեղինակը եզրակացնում է, որ ամեն դեպքում դրա հիմքում ընկած է սխալը:

Մասնավորապես նշվում է, որ մարդու խախտված կամ վիճարկվող իրավունքների պաշտպանությունը հանդիսանում է ցանկացած դատավարության՝ լինի դա քրեական, քաղաքացիական կամ վարչական, առաջնային նպատակը, իսկ դրա չիրագործումը բերում է սխալի, ինչը կարող է

լինել դատական կամ մինչդատական՝ արդեն իսկ կախված գործի քննությունն իրականացնող անձից: Այդ առումով հեղինակը կարծում է, որ առաջնահերթ անհրաժեշտ է դատական կամ մինչդատական սխալը դիտարկել դատավարության (քրեական, քաղաքացիական կամ վարչական) նպատակների չիրագործման, չիրականացման, նպատակներից շեղման տեսանկյունից, իսկ նման պարագայում սխալը առկա է ցանկացած դեպքում, երբ այդ նպատակները չեն իրագործվում, և որևէ նշանակություն չունի նաև այն, թե այդ նպատակների չիրագործումը եղել է օբյեկտիվ, թե սուբյեկտիվ պատճառների հետևանք, մանավանդ այն պարագայում, երբ դա ոչ էական է նաև թե՛ բողոք բերած անձի, թե՛ դատավարության նպատակներին հասնելու տեսանկյունից:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆը՝ «Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով բացառիկ վերանայման ինստիտուտի ծագումը և զարգացումը» վերտառությամբ, նվիրված է հետազոտվող ինստիտուտի ձևավորման և պատմական զարգացման ուսումնասիրությանը:

Մասնավորապես նշվում է, որ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով բացառիկ վերանայման առանցքային տարրերը ձևավորվել են 19-րդ դարում և հասարակական հարաբերությունների, դատական պրակտիկայի զարգացմանը զուգընթաց անընդհատ փոփոխվել և կատարելագործվել են:

Հեղինակը փաստում է, որ սույն ինստիտուտն առաջին անգամ իր իրավական ամրագրումը ստացել է Ռուսական կայսրությունում, այդ թվում՝ նրա կազմի մեջ մտնող Արևելյան Հայաստանում Ալեքսանդր Երկրորդի կողմից իրականացված դատաիրավական բարեփոխումների հիման վրա 1864 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված քրեական դատավարության կանոնադրությունում, ինչը նույնությամբ, առանց փոփոխությունների պահպանվել է 1918 թվականին հռչակված Հայաստանի առաջին Հանրապետությունում:

Համապատասխան հետազոտությունների հիման վրա հեղինակը նշում է, որ սույն ինստիտուտը գործել է նաև Հայաստանի երկրորդ Հանրապետությունում՝ ամրագրված լինելով Հայաստանի ՍԽՀ 1923 և 1934 թվականների, ինչպես նաև ՀՍՍՀ 1961 թվականի քրեական դատավարության օրենսգրքերում:

Ուսումնասիրության շրջանակներում ոչ միայն մանրամասն քննվում են վերը նշված իրավական ակտերը, այլև ներկայացվում են սույն ինստիտուտի առնչությամբ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում վերջին տարիներին տեղի ունեցած զարգացումները:

Առաջին գլխի երրորդ պարագրաֆում՝ «Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով բացառիկ վերանայման կառուցակարգի հարաբերակցությունը դատական վերանայման մյուս եղանակների հետ» խորագրով, հեղինակը ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի և նոր

օրենսգրքի նախագծի համեմատախրավական վերլուծության լույսի ներքո գուգահեռներ է անցկացնում նոր երևան եկած և նոր հանգամանքներով բացառիկ վերանայման կառուցակարգի ու դատական վերանայման մյուս եղանակների միջև, ընդգծում է դրանց նմանություններն ու առանձնացնում տարբերությունները:

Արդյունքում հեղինակը եզրակացնում է, որ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով բացառիկ վերանայման ինստիտուտը, չնայած դատական վերանայման՝ վերաքննության, վճռաբեկության, հիմնարար խախտման, իսկ Նախագծով նաև հատուկ վերանայման կառուցակարգերի հետ որոշ ընդհանուր գծեր ունենալուն, այնուամենայնիվ, իր առանձնահատկություններով էականորեն տարբերվում է վերջիններից և հանդիսանում է վերանայման ինքնուրույն և անկախ վարույթ: Իսկ այդ տեսանկյունից ատենախոսը կարծում է, որ տարբեր քրեադատավարական բովանդակություն և նշանակություն ունեցող վարույթների՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով բացառիկ վերանայման ու բնականոն վերանայման (վերաքննություն, վճռաբեկություն) կառուցակարգերի՝ օրենսդրի կողմից ձևական փոխկապակցումը տեղին չէ, քանի որ այն ոչ միայն ստեղծում է եզրույթային շփոթ, այլև ի հայտ է բերում հակասություններ:

Առաջին գլխի չորրորդ պարագրաֆում, որը վերնագրված է «Մինչդատական վարույթում կայացված վերջնական որոշումների վերանայումը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով», հետազոտվում են մինչդատական վարույթում կայացված վերջնական որոշումների՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքերով վերանայման հետ կապված իրավական հիմնահարցերը:

Մասնավորապես, քննարկվում են սույն որոշումների՝ համապատասխան հիմքերով վերանայման անհրաժեշտության մասին վկայող հանգամանքները, ներկայացվում են այդ առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները:

Նշվում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 4-ի թիվ ՄԴՈ-935 որոշման ընդունումից հետո մինչ օրս չի կատարվել որևէ օրենսդրական փոփոխություն, որն ուղղված կլիներ նախ և առաջ օրենսգրքում տեղ գտած այն դրույթների վերացմանը, որոնք վկայում են, որ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքերով կարող են վերանայվել բացառապես դատական ակտերը:

Վերլուծելով քննարկվող որոշումների՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման դատավարական կարգին առնչվող օրենսդրական դրույթները՝ հեղինակը նշում է, որ այդ դրույթներից պարզ չէ, թե

համապատասխան դեպքերում ՀՀ գլխավոր դատախա՞զը, թե՞ դատարանն է իրավասու վերանայելու այդ որոշումները: Իսկ արդյունքում եզրակացնում է, որ ՀՀ Սահմանադրությամբ դատախազությանը վերապահված լիազորությունները, ինչպես նաև մինչդատական վարույթում դատական վերահսկողության և դատախազական հսկողության հարաբերակցության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները վկայում են, որ այդ իրավունքը նպատակահարմար է վերապահել ՀՀ գլխավոր դատախազին:

Հեղինակը արձանագրում է նաև, որ օրենսգրքում բացակայում է քննարկվող որոշումների՝ համապատասխան հիմքերով վերանայման ընթացակարգի իրավակարգավորումը:

Պարագրաֆի շրջանակներում հեղինակը վերլուծում է նաև խնդրո առարկա հիմնահարցերի վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում սահմանված համապատասխան կարգավորումները:

Երկրորդ գլուխը՝ «Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերջնական դատավարական որոշումների վերանայման հիմքերը և առանձին նախադրյալները» վերնագրի ներքո, կազմված է չորս պարագրաֆներից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆը՝ «Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերջնական դատավարական որոշումների վերանայման հիմքերի ընդհանուր բնութագիրը» վերտառությամբ, նվիրված է նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով բացառիկ վերանայման հիմքերի հիմնական հատկանիշների ուսումնասիրությանը: Մասնավորապես, կատարված հետազոտությունների հիման վրա նշվում է, որ նոր երևան եկած և նոր հանգամանքները բնութագրվում են այնպիսի միասնական հատկանիշներով, ինչպիսիք են դրանց նախկինում անհայտ մնացած լինելը, ինչպես նաև գործի համար էական նշանակություն ունենալը:

Ուսումնասիրելով այս հատկանիշների վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առկա կարծիքները, ինչպես նաև վերլուծելով համապատասխան օրենսդրական կարգավորումները՝ հեղինակը եզրահանգում է, որ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերջնական դատավարական որոշումների վերանայման հիմքերը դատարանին կամ քրեական հետապնդման մարմնին, որպես կանոն, իրենց կամքից անկախ պատճառներով անհայտ մնացած փաստական կամ իրավական հանգամանքներ են, որոնք պետք է գործի ելքի վրա ունենան անմիջական ազդեցություն:

Պարագրաֆի շրջանակներում հեղինակը քննարկում է նաև բացառիկ վերանայման հիմքերը «նոր երևան եկած հանգամանքներ» և «նոր հանգամանքներ» տարբեր եզրույթների ներքո շարադրելու

նպատակահարմարությունը: Այդ առումով ուսումնասիրելով տեսական կարծիքները, ներկայացնելով մի շարք օտարերկրյա պետությունների քրեադատավարական օրենսդրություններում այս հարցին տրված լուծումները՝ հեղինակը եզրակացնում է, որ իրավահարաբերությունների՝ ավելի պարզեցված ձևով կարգավորման տեսանկյունից առավել արդյունավետ կլինի, եթե օրենսդիրը բացառիկ վերանայման համապատասխան հիմքերը շարադրի մեկ եզրույթի ներքո:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Նոր երևան եկած հանգամանքները՝ որպես բացառիկ վերանայման հիմքեր» խորագրով, ուսումնասիրվում են վերջնական դատավարական որոշումների վերանայման հիմք հանդիսացող նոր երևան եկած հանգամանքների հետ կապված հիմնահարցերը:

Մասնավորապես, վերլուծելով օրենսգրքի համապատասխան դրույթները՝ հեղինակը նշում է, որ չորս խմբերի բաժանված նոր երևան եկած հանգամանքները օրենսդրի կողմից բնութագրվել են հետևյալ միասնական տարրերով.

1) առաջին երեք խմբերում ամրագրված փաստական հանգամանքները պետք է հաստատված լինեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, իսկ ՔԴՕ 426.3-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում նման դատական ակտ կայացնելու անհնարինության պարագայում այդ հանգամանքները ենթակա են պարզման օրենսգրքով նախատեսված կարգով կատարվող քննությամբ,

2) առաջին, երրորդ և չորրորդ խմբերում ամրագրված փաստական հանգամանքները պետք է անմիջականորեն ազդեն կայացված դատական ակտի օրինականության կամ հիմնավորվածության վրա միայն այն տարբերությամբ, որ եթե առաջին և երրորդ հիմքերը վերաբերում են արարքի թե՛ հանցավորությանը, թե՛ պատժելիությանը, ապա չորրորդ հիմքը վերաբերում է բացառապես արարքի հանցավորությանը:

Այս տարրերի ուսումնասիրության արդյունքում հեղինակը եզրակացնում է.

- նոր երևան եկած հանգամանքների՝ առաջին երեք խմբերում ամրագրված փաստական հանգամանքներով վերջնական դատավարական որոշումները կարող են վերանայվել, եթե այդ հանգամանքները հաստատվել են բացառապես օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռով, քանի որ միայն այդ ժամանակ է հնարավոր ապացուցված համարել անձի մեղավորությունը,

- հաշվի առնելով այն, որ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով կարող են վերանայվել նաև մինչդատական վարույթում կայացված վերջնական որոշումները, ապա հիմնավոր չի թվում համապատասխան փաստական հանգամանքների և բացառապես դատական ակտի միջև պատճառական կապի հաստատման պահանջը,

- այն, որ նոր երևան եկած հանգամանքների գնահատողական հիմքով օրինական ուժի մեջ մտած վերջնական ակտերը չեն կարող վերանայվել, երբ ի հայտ է գալիս արարքի պատժելիության անօրինական լինելու մասին վկայող փաստական հանգամանք, ընդունելի չի թվում, քանի որ դա փաստացի կարող է հանգեցնել դատարանի՝ ակնհայտ անարդար պատժաչափ նշանակած դատավճիռը չբեկանելուն:

Հեղինակը քննարկում է նաև նոր երևան եկած հանգամանքների յուրաքանչյուր խմբին բնորոշ գծերը և հատկանիշները, վերլուծում դրանց վերաբերյալ առանձին օտարերկրյա պետությունների քրեադատավարական օրենսդրություններում սահմանված համապատասխան կարգավորումները: Արդյունքում ներկայացվում են ոչ միայն գործող օրենսդրական կարգավորումներում, այլև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում առկա խնդիրների լուծմանն ուղղված կոնկրետ առաջարկություններ:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Նոր հանգամանքները՝ որպես բացառիկ վերանայման հիմքեր» վերնագրով, ուսումնասիրվում են նոր հանգամանքի հիմք հանդիսացող ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա վերջնական ակտերի վերանայման հարցերը:

Մասնավորապես, վերլուծվում են հակասահմանադրական ճանաչված կամ սահմանադրական դատարանի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ կիրառված օրենքի դրույթի հիման վրա կայացված վերջնական ակտերի վերանայման վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած մի շարք դիրքորոշումները:

Նշվում է, որ ի տարբերություն հակասահմանադրական ճանաչված օրենքի դրույթի հիման վրա կայացված ակտերի՝ նոր հանգամանքի հիմքով վերանայման՝ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները որպես նոր հանգամանք դիտարկելը նոր իրողություն է քրեադատավարական օրենսդրության պատմության մեջ և Գործող օրենսգրքում ամրագրվել է միայն 2011 թվականի վերջերում տեղի ունեցած օրենսդրական փոփոխություններից հետո:

Այնուհետև ներկայացվում է այդ կապակցությամբ ձևավորված իրավակիրառ պրակտիկան:

Ուսումնասիրելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռները՝ հեղինակը եզրակացնում է, որ չնայած Եվրոպական դատարանը Պայմանավորվող պետություններին ուղղակիորեն չի պարտադրում սահմանելու այնպիսի օրենսդրական կարգավորումներ, որ ներպետական աստիճաններում

հնարավոր լինի վերջնական ակտերի վերանայումը Կոնվենցիայի խախտման հիմքով, սակայն փաստացի գտնում է, որ այդպիսի օրենսդրական հիմքեր ունեցող երկրների վերաբերյալ կայացված վճիռներով Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության խախտում արձանագրվելու պարագայում մինչ իրավախախտումը եղած վիճակի վերականգնման ամենարդյունավետ ձևը հանդիսանում է վարույթի վերաբացումը:

Պարագրաֆի վերջում հեղինակը անդրադառնում է նաև արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը որպես նոր հանգամանքի հիմք դիտարկելու նպատակահարմարությանը, քննարկում է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում արդեն իսկ որոշակիորեն սահմանված այս հիմքի վերաբերյալ առկա որոշ խնդիրները:

Երկրորդ գլխի չորրորդ պարագրաֆում՝ «Նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքերով բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտները և բողոք ներկայացնելու ժամկետները» վերտառությամբ, ուսումնասիրվում են նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով բողոք բերելու իրավունք ունեցող անձանց, ինչպես նաև բողոքի ներկայացման ժամկետների հետ կապված հիմնահարցերը:

Մասնավորապես, հեղինակը ներկայացնում է բացառիկ վերանայման հիմքերով բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձանց տեսանկյունից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում վերջին տարիներին տեղի ունեցած զարգացումները, ուսումնասիրում է այդ անձանց վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները, համեմատախրավական վերլուծության է ենթարկում ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքով և նոր օրենսգրքի նախագծով սահմանված համապատասխան դրույթները:

Արդյունքում նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքերով բողոքարկման իրավունք ունեցող անձանց վերաբերյալ օրենսդրի սահմանած նորմերում ի հայտ եկած առանձին հակասությունների վերացման, իսկ այդ հիմքերով բողոք ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտի լիազորած անձի տեսանկյունից առկա խնդիրների լուծման նպատակով հեղինակը ներկայացնում է օրենսդրական առաջարկություններ:

Քննելով նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով բողոքի ներկայացման ժամկետների հետ կապված հարցերը՝ հեղինակը որպես ուշադրության արժանի հիմնախնդիր նշում է, որ այն դեպքերում, երբ ՀՀ սահմանադրական դատարանը Մահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչում քրեական պատասխանատվություն նախատեսող օրենքի դրույթը, վերջնական ակտերի

վերանայումը ոչ թե պետք է կախված լինի գործի ելքով շահագրգռված անձանց կողմից բողոքի պարտադիր ներկայացումից, այլ այդ ակտերի վերանայման նպատակով միջոցների ձեռնարկումը պետք է լինի առաջին հերթին պետության պոզիտիվ պարտականությունը: Իսկ այն պարագայում, երբ պետությունն ինչ-ինչ պատճառներով քայլեր չի ձեռնարկում համապատասխան անձանց խախտված իրավունքները վերականգնելու համար, ապա նրանք կարող են բողոք ներկայացնել, սակայն դրա համար չպետք է լինի ժամկետային սահմանափակում:

Երրորդ գլուխը՝ «Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերջնական դատական ակտերի վերանայման դատավարական կարգը» վերնագրով, բաղկացած է երկու պարագրաֆներից:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Նոր երևան եկած հանգամանքներով վերջնական դատական ակտերի վերանայման նախնական վարույթ» վերտառությամբ, հետազոտվել են նշված վարույթի հետ կապված մի շարք իրավական խնդիրներ: Մասնավորապես, ուսումնասիրելով նախնական վարույթ հարուցելու հիմքերը՝ հեղինակը հանգում է այն կարծիքին, որ նպատակահարմար չէ սույն վարույթի նախատեսումը նոր երևան եկած հանգամանքների՝ հանցավոր արարք հանդիսացող հիմքերի համար, քանի որ այդ հիմքերը պահանջում են դատավճռով հաստատում, իսկ այդ ժամանակ նախնական վարույթի հիմնական նպատակը՝ քննություն իրականացնելու միջոցով հանգամանքի առկայությունը պարզելը, ինքնաբերաբար վերանում է:

Անդրադառնալով նոր երևան եկած հանգամանքներով նախնական վարույթ հարուցելու առիթներին՝ հեղինակը նշում է, որ հստակեցման կարիք ունի հաղորդումներ և հայտարարություններ ներկայացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, ինչպես նաև ճիշտ կլինի դրանց ձևի և բովանդակության համար պահանջներ սահմանել: Հեղինակը կարծում է նաև, որ նախնական վարույթ հարուցելու առիթների շրջանակը պետք է ընդլայնել՝ դրանց մեջ ներառելով նաև այլ քրեական գործերի քննության ընթացքում ստացված համապատասխան տեղեկությունները:

Հաշվի առնելով ՀՀ Սահմանադրությամբ դատախազությանը վերապահված լիազորությունները՝ հեղինակի համար խնդրահարույց է թվում այն, որ օրենսդիրը դատախազին հնարավորություն է ընձեռել անձամբ քննություն իրականացնելու՝ համապատասխան հանգամանքի առկայությունը պարզելու համար:

Քննարկվող վարույթի արդյունավետության բարձրացման նպատակով հեղինակը առաջարկում է սահմանել ինչպես հաղորդումների քննարկման, այնպես էլ հարուցված վարույթի տևողության ժամկետներ՝ վերջինիս համար

նախատեսելով նաև դրանց հաշվարկման սկզբի և ավարտի պահերը:

Նախնական վարույթի հարուցումը մերժելու հետ կապված հիմնահարցերի ուսումնասիրության արդյունքում հեղինակը մատնանշում է, որ օրենսդիրը չի նախատեսել վարույթի հարուցումը մերժելու մասին որոշման պատճենը շահագրգիռ անձանց ուղարկելու, ինչպես նաև այդ որոշումը վերադաս դատախազին բողոքարկելու ժամկետները, չի ամրագրել, թե վերադաս դատախազը ինչ ժամկետներում է քննում բողոքը, ինչպիսի որոշումներ կարող է կայացնել: Ըստ աստենախոսի՝ պարզ չէ նաև այն, որ եթե վերադաս դատախազը մերժում է բողոքը, ապա արդյոք շահագրգիռ անձն իրավունք ունի այդ որոշումը բողոքարկելու դատարան:

Միննույն ժամանակ նշվում է, որ ի տարբերություն վարույթի հարուցումը մերժելու մասին որոշման՝ համապատասխան անձանց ընդհանրապես իրավունք չի վերապահվել բողոքարկելու վարույթը կարճելու մասին որոշումը, ինչը, հեղինակի կարծիքով, ընդունելի չէ, քանի որ արդյունքում չի ապահովվում այդ անձանց սահմանադրական իրավունքների պաշտպանությունը:

Հետազոտության ընթացքում վերլուծվում են նաև համապատասխան խնդիրներին Նախագծում տրված լուծումները, իսկ արդյունքում ներկայացվում են օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկություններ:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում, որը կոչվում է «Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերջնական դատական ակտերի վերանայման դատական վարույթ», ուսումնասիրվել են նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական վերանայման բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջների, բողոքի քննության կապակցությամբ ընդունվող որոշումների, դատական վերանայման վարույթ հարուցելու արդյունքում կայացվող դատական ակտերի և դրանց հրապարակմանը հաջորդող վարույթի հետ կապված հիմնահարցերը:

Ուսումնասիրության ընթացքում համեմատախրավական վերլուծության են ենթարկվել ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի և նոր օրենսգրքի նախագծի համապատասխան դրույթները, ուսումնասիրվել են համապատասխան հիմնահարցերի հետ կապված ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները:

Որպես եզրահանգում՝ հեղինակը ներկայացրել է օրենսդրական փոփոխություններ կատարելու մի շարք առաջարկություններ:

Եզրակացության մեջ ընդգրկված են հետազոտության հիմնական արդյունքները և հեղինակի եզրահանգումները, ինչպես նաև օրենսդրական փոփոխություններ կատարելու առաջարկությունները, որոնք ամփոփ հանգում են հետևյալին.

1. Մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության ապահովման արդյունավետ երաշխավորման միջոց հանդիսացող նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման (կամ որ նույնն է՝ վարույթի նորոգման կամ վարույթի վերաբացման) ինստիտուտը, հանդես գալով որպես օրինական ուժի մեջ մտած վերջնական ակտերի վերանայման բացառիկ եղանակ և փուլ, հնարավորություն է տալիս անօրինական կամ անհիմն ակտերի վերացման միջոցով ուղղելու գործում թույլ տրված սխալները և վերականգնելու անձի խախտված իրավունքներն ու արժանապատվությունը:

2. Ռուսական կայսրությունում, այդ թվում՝ նրա կազմի մեջ մտնող Արևելյան Հայաստանում 1864 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված քրեական դատավարության կանոնադրությունում, ՀՄԽՀ 1923 և 1934, ՀՍՍՀ 1961 թվականների քրեական դատավարության օրենսգրքերում իր ամրագրումը ստացած բացառիկ վերանայման ինստիտուտը, անցնելով պատմական տարբեր ժամանակաշրջաններով և փուլերով, շարունակաբար զարգացել ու ավելի կատարելագործվել է՝ վերածվելով օրինականության, քրեական գործում թույլ տրված սխալների վերացման, անձի խախտված կամ վիճարկվող իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության ապահովման կարևորագույն երաշխիքի:

3. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով բացառիկ վերանայման մեխանիզմը, չնայած դատական վերանայման մյուս կառուցակարգերի հետ որոշ ընդհանուր գծեր ունենալուն, այնուամենայնիվ, էականորեն տարբերվում է դրանցից և հանդիսանում է վերանայման ինքնուրույն և անկախ վարույթ: Այդ տեսանկյունից քրեադատավարական տարբեր բովանդակություն և նշանակություն ունեցող վարույթների՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով բացառիկ վերանայման ու բնականոն վերանայման (վերաքննություն, վճռաբեկություն) կառուցակարգերի՝ օրենսդրի կողմից ձևական փոխկապակցումը խնդրահարույց է:

4. Մինչդատական վարույթում կայացված վերջնական որոշումների վերանայման արգելքը այնքան էլ ճիշտ չէ դիտարկել որպես կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքի պահանջ, քանի որ այդ որոշումների արդյունքում անձը չի արդարացվում կամ դատապարտվում: Ասվածը, սակայն, չի ենթադրում, որ հիշյալ որոշումները չեն կարող վերանայվել նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքերով, բայց այդ դեպքում վերանայումը կլինի ոչ թե *ne bis in idem* հիմնարար սկզբունքից բացառություն, այլ նվազագույնից բարձր չափանիշ անձի իրավունքների պաշտպանության լրացուցիչ մեխանիզմների տեսանկյունից:

5. Մինչդատական վարույթում կայացված վերջնական որոշումների՝ նոր

երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքերով վերանայման հնարավորությունը օրենսդրորեն համակարգային իրավակարգավորման ենթարկելու մասին սահմանադրական պահանջը կատարելու համար ոչ միայն վերացման են ենթակա այդ հնարավորությունն արգելող օրենսդրական դրույթները, այլև հստակ կարգավորման կարիք ունի դրա իրականացման դատավարական կարգը: Իսկ ոչ թե դատարանին, այլ ՀՀ գլխավոր դատախազին վերանայման այս իրավունքը վերապահելը պայմանավորված է ՀՀ Սահմանադրությամբ դատախազությանը վերապահված լիազորություններով, ինչպես նաև մինչդատական վարույթում դատական վերահսկողության և դատախազական հսկողության հարաբերակցության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներով:

6. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերջնական դատավարական որոշումների վերանայման հիմքերը դատարանին կամ քրեական հետապնդման մարմնին, որպես կանոն, իրենց կամքից անկախ պատճառներով անհայտ մնացած փաստական կամ իրավական հանգամանքներ են, որոնք պետք է անմիջական ազդեցություն ունենան գործի ելքի վրա:

7. Իրավահարաբերությունների՝ ավելի պարզեցված ձևով կարգավորման տեսանկյունից առավել արդյունավետ կլինի, եթե օրենսդիրը բացառիկ վերանայման համապատասխան հիմքերը շարադրի մեկ եզրույթի ներքո:

8. Նոր երևան եկած հանգամանքների՝ ձևական ապացուցման հիմքերով վերջնական դատավարական որոշումները կարող են վերանայվել, եթե այդ հիմքերը հաստատվել են բացառապես օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռով, քանի որ միայն այդ ժամանակ է հնարավոր ապացուցված համարել անձի մեղավորությունը: Իսկ այն, որ նոր երևան եկած հանգամանքների գնահատողական հիմքով օրինական ուժի մեջ մտած վերջնական ակտերը չեն կարող վերանայվել, երբ ի հայտ է գալիս արարքի պատժելիության անօրինական լինելու մասին վկայող փաստական հանգամանք, անարդարացի է թվում, քանի որ դա փաստացի կարող է հանգեցնել դատարանի՝ ակնհայտ անարդար պատժաչափ նշանակած դատավճիռը չբեկանելուն:

9. ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները՝ որպես նոր հանգամանքներով վերանայման հիմքեր, վկայում են՝

1) ոչ միայն հակասահմանադրական ճանաչված, այլև սահմանադրական դատարանի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ կիրառված օրենքի դրույթի հիման վրա կայացված վերջնական ակտերը ենթակա են վերանայման նոր հանգամանքի հիմքով,

2) մինչ վարույթի ավարտը դատարանների կողմից ներկայացված դիմումի հիման վրա նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության

ստուգման արդյունքում սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումները կարող են հանդիսանալ նոր հանգամանք այն անձանց համար, ում նկատմամբ առկա է եղել օրինական ուժի մեջ մտած վերջնական ակտ, և նրանք դեռևս չեն կորցրել սահմանադրական դատարան դիմելու իրենց իրավունքը,

3) սահմանադրական դատարանի կողմից օրենքի դրույթի՝ իրավաբանական ուժը կորցնելը տարածվելու դեպքում այդ դրույթը ուժը կորցնելու պահից նոր հանգամանքներով բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտները օրենքով սահմանված կարգով կարող են բողոք ներկայացնել ուժը կորցրած ճանաչված նորմի հիման վրա կայացված վերջնական ակտի վերանայման համար:

10. Չնայած Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Պայմանավորվող պետություններին ուղղակիորեն չի պարտադրում սահմանելու այնպիսի օրենսդրական կարգավորումներ, որ ներպետական աստիճաններում հնարավոր լինի վերջնական ակտերի վերանայումը Կոնվենցիայի խախտման հիմքով, սակայն փաստացի գտնում է, որ այդպիսի օրենսդրական հիմքեր ունեցող երկրների վերաբերյալ կայացված վճիռներով Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության խախտում արձանագրվելու պարագայում մինչ իրավախախտումը եղած վիճակի վերականգնման ամենարդյունավետ ձևը հանդիսանում է վարույթի վերաբացումը:

11. Արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքի ուժի մեջ մտնելը՝ որպես նոր հանգամանքի հիմք դիտարկելը ընդունելի է թվում:

12. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքերով բողոքարկման իրավունք ունեցող անձանց վերաբերյալ օրենսդրի սահմանած նորմերում ի հայտ եկած առանձին հակասությունները վերացման, իսկ այդ հիմքերով բողոք ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտի լիազորած անձի տեսանկյունից առկա խնդիրները լուծման կարիք ունեն:

13. Այն դեպքերում, երբ ՀՀ սահմանադրական դատարանը Մահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչում քրեական պատասխանատվություն նախատեսող օրենքի դրույթը, վերջնական ակտերի վերանայումը ոչ թե պետք է կախված լինի գործի ելքով շահագրգռված անձանց կողմից բողոքի պարտադիր ներկայացումից, այլ այդ ակտերի վերանայման նպատակով միջոցների ձեռնարկումը պետք է լինի առաջին հերթին պետության պոզիտիվ պարտականությունը: Իսկ այն պարագայում, երբ պետությունն ինչ-ինչ պատճառներով քայլեր չի ձեռնարկում համապատասխան անձանց խախտված իրավունքները վերականգնելու համար, ապա նրանք կարող են բողոք ներկայացնել, սակայն դրա համար չպետք է լինի ժամկետային սահմանափակում:

14. Արդարացի կլինի, եթե ՔԴՕ 426.3-րդ հոդվածի 4-ից 6-րդ մասերում սահմանված ժամկետային կանոնները հավասարապես վերաբերեն նաև նոր հանգամանքներով վերանայման հիմքերին:

15. Նոր երևան եկած հանգամանքներով վերջնական դատական ակտերի վերանայման նախնական վարույթի արդյունավետության բարձրացման, ինչպես նաև վարույթ հարուցելու առիթների, ժամկետների, վարույթի հարուցումը մերժելու կամ վարույթը կարճելու մասին որոշումների բողոքարկման կարգի և ժամկետների հստակեցման նպատակով առկա է օրենսդրական փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն:

16. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքերով դատական վերանայման բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջների հստակեցման, այդ պահանջները պահպանված չլինելու դեպքում իրավական հետևանքների սահմանման, ինչպես նաև բողոքի քննության, դրա կապակցությամբ ընդունվող որոշումների, դատական վերանայման վարույթ հարուցելու արդյունքում կայացվող դատական ակտերի և դրանց հրապարակմանը հաջորդող վարույթի հետ կապված առկա առանձին հիմնախնդիրները օրենսդրորեն լուծման կարիք ունեն:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. Հովհաննիսյան Ա., Մինչդատական վարույթում կայացված վերջնական որոշումների վերանայման հետ կապված հիմնահարցերը ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի և նախագծի համատեքստում, «Պետություն և իրավունք», Երևան, 2012, No 3 (57), էջեր 88-97:

2. Հովհաննիսյան Ա., Նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման որոշ առանձնահատկությունները ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում, «Պետություն և իրավունք», Երևան, 2013, No 1 (59), էջեր 126-137:

3. Հովհաննիսյան Ա., Նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով բացառիկ վերանայման ինստիտուտի հարաբերակցությունը դատական վերանայման մյուս եղանակների հետ, «Արդարադատություն», Երևան, 2014, մարտ 1 (24), էջեր 22-27:

РЕЗЮМЕ

ОГАНЕСЯН АРМЕН АРТАШЕСОВИЧ

ПРОБЛЕМЫ ПЕРЕСМОТРА ОКОНЧАТЕЛЬНЫХ ПРОЦЕССУАЛЬНЫХ РЕШЕНИЙ ПО ВНОВЬ ОТКРЫВШИМСЯ ИЛИ НОВЫМ ОБСТОЯТЕЛЬСТВАМ В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ РА

В сфере обеспечения защиты прав человека важное значение имеет защита его нарушенных или дискуссионных прав, свобод, законных интересов и достоинств, в числе результативных средств обеспечения и гарантий которой свое особое место занимает институт пересмотра окончательных процессуальных решений по вновь открывшимся или новым обстоятельствам.

Кандидатская диссертация посвящена всестороннему анализу теоретических, правовых и практических проблем именно данного института.

Следует отметить, что названный институт исключительного пересмотра, который был разработан на основе соответствующих норм Уголовно-процессуального положения Российской Империи 1864 г., Уголовно-процессуальных кодексов Армянской ССР 1923г., 1934г., 1961г., содержит в себе ряд недостатков даже несмотря на последние изменения, внесенные в действующий Уголовно-процессуальный кодекс РА.

Об этом свидетельствуют и существенные проблемы, возникающие в правовой прикладной практике, и ряд высказанных Конституционным судом РА положений, и новые подходы к регулированию отдельных элементов данного института в проекте нового Уголовно-процессуального кодекса РА.

Именно данные обстоятельства, как и отсутствие углубленного исследования темы в отечественном процессуальном праве, а также неоднозначные представления относительно многочисленных вопросов в судопроизводственной литературе, свидетельствуют об актуальности темы.

Новизна данного исследования заключается в том, что, основываясь на действующем Уголовно-процессуальном кодексе РА и проекте нового кодекса,

а также сравнительно-правовом анализе зарубежного уголовного законодательства, теоретических мнений, правовой позиций Конституционного суда РА и Европейского суда по правам человека, изучения и освещения судебных актов Кассационного суда и судов других инстанций РА, впервые в отечественном праве делается попытка подвергнуть комплексному анализу уголовно-процессуальные отношения, возникающие при пересмотре окончательных процессуальных решений по вновь открывшимся или новым обстоятельствам.

Так, в частности, в рамках исследования были рассмотрены сущность, происхождение и развитие института пересмотра окончательных процессуальных решений по вновь открывшимся или новым обстоятельствам, начиная с его истоков и до комплексным анализом предлагаемых подходов в проекте нового Уголовно-процессуального кодекса РА.

Автор также проводит параллели между институтом пересмотра окончательных процессуальных актов по вновь открывшимся или новым обстоятельствам и другими формами пересмотра, подчеркивает их сходства и различия, обсуждает имеющие важное значение в прикладной практике такие вопросы, как проблема исключительного пересмотра окончательных процессуальных актов, принятых на досудебной стадии, предлагая возможные пути их решения.

Были исследованы основания для исключительного пересмотра, отдельные предпосылки, а также вопросы связанные с процессуальным порядком, преимущества и недостатки их законодательного регулирования, а также наличествующие правовые и практические вопросы были раскрыты.

На основе результатов проделанного исследования представлен ряд теоретических обобщений и законодательных предложений по совершенствованию изучаемого института.

Основные положения диссертации нашли свое отражение в опубликованных автором научных статьях.

RESUME

HOVHANNISYAN ARMEN ARTASHES

THE ISSUES OF REVIEW OF FINAL PROCEDURAL DECISIONS ON NEWLY DISCOVERED OR NEW CIRCUMSTANCES IN THE CRIMINAL PROCEDURE OF RA

Protection of dignity, legitimate interests, freedoms and human rights violated or appealed is of particular importance in the field of providing defense for human rights, and the institute of review of final procedural decisions on newly discovered or new circumstances occupies its special place on a number of effective measures of protection and guarantee.

The thesis is devoted to the comprehensive research and analysis of theoretical, legal and practical issues of this institute.

It should be noted that the institute of exclusive review, which has been designed on the bases of the corresponding provisions of 1864 Criminal Procedural Statute of the Russian Empire, Criminal Procedural Codes of ASSR of 1923, 1934 and 1961, is not free from shortcomings even after essential changes made in the current Code of Criminal Procedure of the Republic of Armenia. This is evidenced by the problems in the legal practice, a number of positions expressed by the Constitutional Court as well as the new regulation of individual elements of this institute in the draft of the new Code of Criminal Procedure.

These circumstances, as well as the superficial research of the problem in domestic procedural jurisprudence, absence of uniform understanding of a number of connected issues, evidence the actuality of the subject.

The originality of this work is manifested in the fact that for the first time in domestic procedural jurisprudence an attempt has been made to study in complexity the criminal-procedural relations of review of the final procedural acts on the bases of newly discovered or new circumstances, based on both the Code of Criminal Procedure of RA and the Draft of the new Code, as well as comparative legal analysis of foreign legislation, theoretical opinions, the legal positions of the Constitutional Court of RA and European Court of Human Rights, research and clarification of the judicial acts of the court of Cassation and other courts of RA

Particularly, within the frames of the research essence, origin and development of the institute of review of final procedural decisions on newly discovered or new circumstances, relationship between this institute and other methods of review have been studied. Consequently, the author has come to the following conclusions:

- The institute of review on the bases of newly discovered or new circumstances serving as productive means of guarantee of protection of fundamental human rights, acting as an exclusive method and stage for review of final acts, by means of elimination of illegal or groundless acts makes it possible to correct mistakes and restore violated rights and dignity of a person.

- The institute of exclusive review being fixed in the Criminal Procedure Statute of the Russian Empire (passed on 20th of November, 1864), in the Criminal Procedure Codes of 1923, 1934 and 1961 of ASSR, passing through different historical periods and stages, has been continuously developed and improved turning into the most important guarantee to ensure protection of lawfulness, legal interests and violated or appealed rights, correction of mistakes made in a criminal case.

- Mechanism of exclusive review on newly discovered or new circumstances in spite of the fact that it has some features in common with other institutes of review, however, essentially differs from them and it is a separate and independent proceeding. From that point of view, formal interconnection of institutes of natural review and exclusive review for non homogenous proceedings with different content and meaning would hardly be acceptable as it would not only cause terminological confusion but also create contradictions.

The author has also discussed issues of importance in practice such as problems related to review on the exclusive bases of final decisions taken in the pretrial proceeding showing possible ways of their regulation.

Problems regarding the bases of exclusive review, its separate prerequisites, as well as procedural order have been studied, shortcomings and advantages of their legislative settlements, legal and practical issues have been showed.

Based on the analysis, the author came to a number of theoretical conclusions as well as made a range of recommendations concerning the improvement of criminal procedure legislation.

The fundamental standpoints of the thesis have been reflected in the scientific articles published by the author.